Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում»ծրագիր

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Բազմաղբյուրի Ն. Սաֆարյանի անվան միջնակարգ դպրոց

Առարկա՝ Աշխարհագրություն

Թեմա՝ Սովորողների մոտ արժեհամակարգի ձևավորում

Վերապատրաստող մենթոր՝ Ն.Մեսրոպյան

ՈՒսուցիչ՝ Ն.Սարգսյան

Երևան 2023

## *Բովանդակություն*

1.Ներածություն……3

2.Ինչ՞ է արժեհամակարգը ……7

3.Աշխարհագրության դերը երեխաների արժեհամակարգերի ձևավորման գործում ……10

4.Աշակերտների մոտ արժեհամակարգերի ձևավորումը աշխարհագրության դասին՝գործնական աշխատանքի կիրառմամբ ……17

5.Արժեհամակարգի ձևավորման դասի օրինակ……..……..19

6.Եզրակացություն……21

7.Գրականության ցանկ……..22

# *Ներածություն*

Մարդկային արժեքները և մշակույթը սերտորեն կապված են միմյանց հետ: Մշակութային միջավայրը ձևավորվում է անձին որպես հասարակության անդամ, որպես յուրահատուկ արժեքների կրող: Արժեքները ձևավորվում են որոշակի սահմաններ ու մարդկային վարքի նորմեր և իրականացնում են նպատակների և դրդապատճառների ձևավորման գործառույթներ, պայմանավորում վարքի որոշակի տիպի նախընտրելիությունը՝ ապահովելով իրականության նկատմամբ ընտրական վերաբերմունք: Արժեքները հասարակության կողմից ընդունված ցանկալիի մասին պատկերացումներն են:

Տարբեր հեղինակներ տարբեր մոտեցումներով են հանդես գալիս արժեքները սահմանելիս: Օրինակ՝ արժեքների էությունը դրանց նշանակությունն է, այլ ոչ թե դրանց փաստացիությունը (Մ.Ռոկիչ,Շ.Շվարց):

Հեղինակների մի խումբ (Կ.Կլակիխոն,Ջ.Ռոտերը) արժեքները դիտում են որպես ընտրություն՝ սահմանելով դրանք որպես գիտակցված և ոչ գիտակցված, անձին կամ խմբին բնորոշ ցանկալիի մասին պատկերացումներ, որոնք պայմանավորում են նպատակների ընտրություն՝ հաշվի առնելով միջոցները և գործունեության ձևերը: Ընդունված է տարբերակել արժեքների երկու տիպ՝

●Սոցիալական խմբերին բնորոշ արժեքները՝ սոցալ-քաղաքական, հոգևոր, նյութական և այլ արժեքներ:

●Անձնային-անհատական արժեքները դրսևորվում են անձի արժեքային կողմնորոշումներում, վերջիններս սերում են հասարակական, ազգային, մշակութային արժեքներից:

Շ.Շվարցը գտնում է, որ արժեքների հիմքում ընկած են նպատակները: Այդ պատճառով նա արժեքները խմբավորել է՝ ելնելով դրանց հիմքում ընկած նպատակների տեսանկյունից:

Շվարցի առանձնացրած տասը արժեքներն են՝ ավանդականությունը, բարությունը,ունիվերսալիզմը,ինքնուրույնությունը,ստիմուլյացիան,գեդոնիզմ,ձեռք բերում,իշխանություն,անվտանգություն:

Հաջորդ տեսության հեղինակն Ռ.Ինգլիարթն է, որը արժեհամակարգը բաժանում է երկու մասի.

●Ավանդական և աշխարհիկ-ռացիոնալ արժեքներ: Ավանդական արժեքների շարքին են դասվում կրոնը, ընտանիքը, սոցիալական հարմարվողականությունը և այլն: Աշխարհիկ-ռացիոնալ արժեքներն են՝ ռացոնալ վարքը, հաջողության ձգտումը, կրոնի ցածր դերը և այլն:

●Գոյապահպան և ինքնաարտահայտման արժեքներ ընդգրկում են տնտեսական և ֆիզիկական անվտանգությունը, նյութական արժեքները, մարդու իրավունքը, նյութական բարեկեցությունը և այլն:

Ընդհանրացնելով կարելի է ասել,որ արժեքները դիտարկվում են որպես հիմնարար բարոյական և էթիկական նորմեր, որոնք միևնույն ժամանակ իրականացնում են կարգավորող և կանխատեսող ֆունկցիա և ապահովում են սոցալական համակարգի ամբողջականությունը: Արժեքները միմյանց հետ փոխազդեցության մեջ մտնելով ձևավորում են մի համակարգ, որը հասարակության կազմավորման կարևորագույն տարրն է, և հենց արժեքային տարբերություններն են, որ հանգեցնում են մշակութային անհավասարությանը: Ամփոփելով նշենք,որ արժեքների միջազգային ուսումնասիրությունների արդյունքները թույլ են տալիս դուրս բերել հասարակության կոնկրետ դիմագիծը, արժեքների և սոցալական ֆենոմենների միջև կապերը: Դրանց պարբերական ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս հստակ պատկերացնել այդ փոփոխությունների հետևանքները, որոշակի կանխատսումներ անել՝ ելնելով արժեքային պատկերի փոփոխություններից և համապատասխան քաղաքականություն մշակել:

**Հետազոտական աշխատանքի արդիականությունը:** Թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգում սովորողի դերի

կարևորությամբ՝ որպես ինքնուրույն, նախաձեռնող անհատ, ով կարող է գործնականում օգտագործել արժեքների մասին տրված իր տեսական գիտելիքները:

**Հետազոտության նպատակը:** Ուսումնասիրել արժեհամակարգի ձևավորումը սովորողների մոտ աշխարհագրության դասերին: Ուսումնասիրել տարբեր տարիքային խմբերի մոտ արժեհամակարգի ձևավորումը աշխարհագրության դասերին: Աշխարհագրության ժամին ձևավորված արժեհամակարգի կիրառությունը գործնականում: Ինչ՞ դեր ունի արժեհամակարգի ձևավորումը դասերի ընթացքում: **Հետազոտության խնդիրները:** Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական ստեղծագործական մտածողությունը, հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները: Խթանել սովորողների ճանաչողական ակտիվությանը, մտածողության ինքնուրունությանը, սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները: Ձևավորել սեփական գործունեությունը հանդուրժողականության և մարդու իրավունքների, ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք և կարողություն: Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրերի և ապագայի նկատմամբ:

**Ո՞ր առանցքային կարողունակությունն է ուղղված նպատակի ուսումնասի-ությանը:** Կարողունակությունները ևս դասերի ընթացքում կիրառելի կարևոր ձևերից են: Կարողունակություններից առավել կարևոր է «սովորել սովորելու » կարողունակությունը՝ սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում:Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները

քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ:

Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն, սովորողները առօրյա կյանքում օգտագործում են մաթեմատիկական մտածողություն՝ բնության, հասարակության, մշակույթի և աշխատանքային ոլորտի երևույթները ճանաչելու և դրանք մաթեմատիկական կառուցվածքների, բանաձևերի աղյուսակների միջոցով հասկանալու համար: Նրանք ընկալում են բնագիտական մտածողություն և աշխատանք: Կարևոր է ինքնաճանաչողական կարողունակությանը, երբ սովորողն ընդունակ է ինքնաանդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով ձգտել ինքնաճանաչմանը: Նրանք ձևավորում են վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ, հաջողությամբ կառավարում են սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները, կարողանում են վարել առողջ, անվտանգ կենսակերպ և, ինչպես նաև մասնագիտական կողմնորոումներ, ինչպես նաև լեզվական կարողունակությունը և գրագիտությունը: Ընդհանոր գրագիտությունը կազմում է սովորելու և լեզվական հաղորդակցության հիմքը, որի հիման վրա կարող են ձևավորվել գրագիտության մյուս ձևերը ( քաղաքացիական, բնապահպանական և այլն):

# 1. Ինչ է արժեհամակարգը

Դպրոցում սովորողներին կրթելիս մենք հաճախ օգտագործում ենք «արժեք» բառը: Ի՞նչ է արժեքը: Արժեքը՝ աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքների և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա: Մշակույթը խիստ կապված է մարդու արժեհամակարգի հետ: Արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշ է, որի կարևոր կատեգորիաներից են հավատն ու սերը:

Հավատը՝ ծնում է հույս և մղում մարդուն ապրելու: Մարդիկ քանի դեռ ապրում են՝ հավատում են, քանի դեռ հավատում են՝ ապրում են:

Սերը՝ մյուս մարդկանց հետ միավորելու ձգտումն է: Հաճախ արժեք է համարվում ճշմարտությունը,հատկապես բարու և գեղեցիկի հետ կապված: Կյանքում հաճախ ճշմարտությունը զոհաբերվում է արժեքներին: Մեծն փիլիսոփա Արիստոտելն առաջնորդվում էր «Թեև Պլատոնը բարեկամս է, բայց ճշմարտությունը թանկ է» սկզբունքով, իսկ ներկայումս շատերը առաջնորդվում են «թեև ճշմարտությունը թանկ է,բայց Պլատոնը բարեկամս է » սկզբունքով:Արժեքը հաստատուն է մնում խոստման և վստահության շնորհիվ: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք՝ սովորողի ճշմարիտ արժեքների ձևավորման համար: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են՝ ավանդական միջոցները, այսինքն՝ սովորողի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքների և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լնում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրնակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ.Մոնտենը «...Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու կանոնները քարշ են տալիս իրենց ետևից»: Սովորողի արժեքների ձևավորման վրա ազդող

մյուս գործոնը տարիքային գործոնն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրանց դրսևորումն են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտհագուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է սովորողի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակի անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը,կենցաղային բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը:
Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղային բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը:

Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է »:

Սովորող անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումը: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այնպես էլ՝ բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի նաև՝ միջամտություն:

---

Տես՝Սուխոմլինսկի Վ.Ա Սիրտս նվիրում եմ երեխաներին,Երևան 1977:

Սովորողի արժեքների ձևավորման խնդիրները, բնականաբար, լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատությունում՝ ուսումնա-դաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում:

Ուսուցման գործընթացը դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է, բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարը, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտի մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական այլ գիտելիքներ և վերաբերմունքներ:




Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

## *2.Աշխարհագրության դերը սովորողների արժեհամակարգերի ձևավորման գործում*

Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն բնագիտական առարկաները, մասնավորապես աշխարհագրությունը:

Աշխարհագրությունը բոլոր երկրների դպրոցների առանցքային հանրակրթական առարկաներից է: Այն միակ առարկան է,որ տալիս է Երկրի՝ որպես մարդկության մոլորակի և նրա վրա մարդկային հասարակության տարածքային կազմակերպման մասին անմիջական պատկերացում: Դա պայմանավորված է գիտական գիտելիքների համակարգում աշխարհագրության տեղի և ներքին կառուցվածքի յուրօրինակությամբ:

Աշխարհագրությունն է, որ ժամանակակից աշխարհը իր զարգացման օրինաչափություններով և օրեցօր բարդացող հիմնախնդիրներով ճանաչելի է դարձնում սովորողին, ծանոթացնում է նրան տարբեր երկրների բնությանը, բնակչությանը և տնտեսությանը, տարբեր ժողովուրդների սովորույթներին, նյութական և հոգևոր մշակույթին: Աշխարհագրությունն է սովորողին մղում ճանաչելու սեփական հայրենիքը, հասկանալու և գնահատելու նրա տեղն ու դերը, ընկալելու փոխադարձ կապերը մարդ-բնություն փոխհարաբերությունում:

Աշխարհագրական գիտելիքների շնորհիվ ամրապնդվում է այն համոզմունքը, որ աշխարհը ճանաչելի է նյութական, միասնական, ամբողջական, բնության ու հասարակական կյանքի բաղադրիչների միջոցով, որոնք գտնվում են սերտ կապի մեջ: Այդ բաղադրիչներն էլ առանձին-առանձին ու միասնաբար անընդհատ զարգանում և փոփոխվում են ժամանակի ու տարածության մեջ:

Աշխարհագրության միջոցով տնտեսության և դրա ճյուղերի ուսումնասիրումն աշակերտներին հնարավորություն է տալիս ծանոթանալու աշխատանքային տարբեր գործողության ոլորտներին: Աշխարհագրության դերը մեծ է դպրոցներում, հատկապես բարոյագիտական արժեքների ձևավորման գործում:

Աշխարհագրական-հայրենագիտական աշխատանքները բնության գրկում ամրապնդում են աշակերտների առողջությունը, իսկ աշխատանքների ընթացքում հանդիպող դժվարությունների և խոչընդոտների հաղթահարումը կոփում է նրանց բնավորությանը և առողջությանը՝ միաժամանակ զարգացնելով ինքնուրույնության, գործունեության ծավալուն որոշակի հմտություններ: Գործնական աշխատանքները լայն հնարավորություն են ընձեռում սովորողների մեջ դաստիարակելու ընկերություն, մարդասիրություն, համակեցություն, փոխադարձ հարգանք, իրար օգնելու մարդկային բարձրարժեք գծեր, ինչպես նաև, համատեղ նախագծեր կազմելու, հետազոտություններ իրականացնելու կարողունակություն:

Աշխարհագրություն առարկան ամենասկզբում աշակերտներին ծանոթացնում է իր իսկ շրջապատող աշխարհին, նրանում կայացող երևույթներին, դրանց էկոլոգիապես հավասարակշռության խախտման հետևանքներին: Մասնակի չափաբաժնով տեղեկացնում է անցանկալի աղետների, դրանց հետևանքների և կանոնակար- գությունների մասին: Աշխարհագրություն առարկան ունի լայն սպեկտր հետազոտության համար, ինչպես տեսանելի, այնպես էլ անտեսան երևույթների ուսումնասիրման բնագավառում:

Ծանոթանալով շրջակա աշխարհի հետ՝ սովորողը պատկերացում է կազմում աշխարհի ներսում տեղի ունեցող երևույթների մասին, գիտակցում է, թե իր կողմից կատարվող գործողության ո՞ր մասն է նպաստավոր, և ո՞ր մասն է աննպաստ բնության համար: Սա արժեքների ձևավորում է աշխարհագրության շրջանակներում բնության հանդեպ:

Ծանոթանալով աղետների տեսակների հետ, աշակերտը կարողանում է տարբերել տվյալ երևույթը և հարկ եղած դեպքում պաշտպանվել: Սա այն կարողունակությունն է, որը սովորողը ձեռք է բերում դասի շրջանակներում:

Ծանոթանալով աշխարհի մշակութային արժեքներին և պատմամշակութային կոթողներին, կարողանում է ճշգրիտ պատկերացում կազմել

իր հայրենիքի մշակութային արժեքների, աշխարհում տեղի ունեցող մշակութային փոփոխությունների մասին:

Էկոլոգիական համակարգի մասին իմանալով պատկերացում է կազմում նրանում տեղի ունեցող վտանգավոր երևույթների մասին, ինչպիսիք են՝ վտանգավոր արդյունաբերական գործարանների, ջերմոցային էֆեկտի, արտադրական թափոնների, սպառվող բնական ռեսուրսների, դրանց ճշգրիտ օգտագործման արդյունքում կարող ենք խնայել բնությունը և փոխանցել հաջորդ սերունդներին:

Աշխարհագրական համակարգը մեկ միասնական համակարգ է, և դրա մեկ տարրի փոփոխության հետևանքով կարող է փոխվել ամբողջ համակարգը: Օրինակ՝ գլոբալ տաքացման հետևանքով կարող են հալվել սառցադաշտերը, դրա հետևանքով առավել խոնավ տարածքները կխոնավանան, իսկ անապատները կնդլայնեն իրենց ներկայիս տածությունները: Դպրոցական աշխարհագրությունը աշակերտներին սովորեցնում է խնայել և պահպանել բնությունը: Բնության մասին արժեհամակարգի ձևավորմամբ աշակերտները կսիրեն իրենց շրջապատող բնությունը և ամեն ինչ կանեն, որպեսզի այն անաղարտ պահեն և երկար ժամանսկ վայելեն այն ինչ իրենց տրվում է բնությունից: Դպրոցական աշխարհագրության բովանդակության հիմքում ընկած են բնության և հասարակության օրենքների օբյեկտիվ իրողություներն ու ճանաչելիությունը, բնության և հասարակության փոխադարձ կապը, տարածաժամանակային փոխազդեցությունները և դրանց առաջընթաց զարգացումը: Դպրոցական յուրաքանչյուր դասընթաց յուրովի է բացահայտում աշխարհահայացքային այդ գաղափարները՝ ելնելով իր առանձնահատուկ բովանդակությունից: Նեղ իմաստով օբյեկտներից ելնելով, և՛ բնական, և՛ հասարակական աշխարհագրությունն ունի գիտական ճիշտ աշխարհահայաց ձևավորելու կարողություն, քանի որ դրանք ընդգրկում են բնական և հասարակական երևույթների լայն շրջանակ, ինչպես նաև բնական

միջավայրի և հասարակության միջև գոյություն ունեցող կապերը տեսնելու, սովորելու և հասկանալու հնարավորություններ:

Աշխարհագրական գիտելիքների շնորհիվ ամրապնդվում է այն համոզմունքը, որ աշխարհը ճանաչելի է նյութական, միասնական, ամբողջական բնության ու հասարակական կյանքի բաղադրիչներ միջոցո, որոնք գտնվում են սերտ կապի մեջ և այդ բաղադրիչներն էլ առանձին-առանձին ու միասնաբար անընդհատ զարգանում և փոփոխվում են ժամանակի ու տարածության մեջ:

Աշխարհագրության միջոցով տնտեսության, դրա ճյուղերի ուսումնասիրումն սովորողներին հնարավորություն է տալիս ծանոթանալու աշխատանքային տարբեր գործունեության ոլորտներին, զանազան մասնագիտություններին, ինչը հնարավորություն է տալիս դպրոցականներին որոշելու սեփական հետաքրքրություններն աշխատանքային գործունեության ընտրության ժամանակ:

Դպրոցականների տարաբնույթ դիտարկումներն աշխարհագրությունից հնարավորություն են տալիս սովորողներին մի կողմից երևույթները տեսնել համալիր ձևով, մյուս կողմից՝ դրանք նպաստում են նրանց դիտողականության զարգացմանը: Այս առումով արժեքավոր են երկարատև դիտարկումները, որոնք շրջակա բնույթը և մարդու տնտեսական գործունեությունն ուսումնասիրելու ժամանակ հնարավորություն է տալիս համապատասխան հետևություններ անել կլիմայի, գետերի ռեժիմի, հողաբուսական ծածկի, մարդուն շրջապատող բնության ռացիոնալ օգտագործման և պահպանման առանձնահատկությունների վերաբերյալ:

Դպրոցականների երևակայության զարգացման կարևորագույն միջոցներ են համարվում ուսուցչի պատկերավոր խոսքը, երևակայական ճանապարհորդությունները քարտեզով և այլն: Քարտեզների միջոցով տարբեր տարածաշրջանների աշխարհագրական բնութագրերի կազմումը, ստեղծագործական բնույթի աշխատանքների կատարումը սովորողների մոտ զարգացնում է տրամաբանական մտածողության այնպիսի կողմեր, ինչպիսիք են ապացուցելիությունը, դատողության հատկությունը, ճիշտ մտահոգումներ կատարելու կարողունակությունը:

Մտածողության զարգացումը կապված է աշակերտի խոսքի զարգացման հետ: Ծանոթանալով մեծ թվով աշխարհագրական անունների, թվերի ու փաստերի հետ զարգացնում է աշակերտի հիշողությանը:

***Ըստ նոր հանրակրթության պետական չափորոշիչում շրջանավարտին ներկայացված ուսումնառության վերջնառդյունքների***

Տարրական դպրոցն ավարտողը պետք է՝

*•Իմանա, որ շրջապատող աշխարհի ճանաչողության եղանակներից մեկը գիտությունն է, ներկայացնի մարդու և բնության վրա գիտության որոշ ձեռքբերումների ազդեցությունը*

*•Ունենա նախնական պատկերացում էկոհամակարգերի, դրանց փոխադարձ կապերի և պահպանության մասին*

*•Տարբերակի և կիրառի բնական ռերսուրսները խնայելու, մարդու կողմից շրջակա միջավայրը պահպանելու և բարելավելու ձևերը, մասնակցի բնապահպանական պարզ միջոցառումներին:*

***Հիմնական դպրոց ավարտող աշակերտը պետք է՝***

*•Կիրառի բնագիտական առարկաներից ստացված հիմնարար գիտելիքները բնության և տիեզերքի օբեկտների նկարագրությանը երևույթների և դրանց փոխադարձ կապերի բացատրությանը*

*•Մասնակցի բնապահպանական միջոցառումների պլանավորմանը և իրականացմանը*

***Միջնակարգ դպրոցում աշակերտը պետք է՝***

*•Գնահատի կայուն զարգացման ապահովման հնարավորությունները տարբեր ռերսուրսների կառավարման և պլանավորված օգտագործման միջոցով*

*•Նախաձեռնի, պլանավորի և իրականացնի բնապահպանական միջոցառումներ*

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները:

Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների արժեքային, որակների, կամքի, բնավորության, զգացմունքների հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով ( անհատական, խմբային, էքրսկուրսիա և այլն) ավելի արդյունավետ է դարձնում սովորողների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Յուրաքանչյուր ուսուցիչ ձգտում է անթերի դաս անցկացնել, սակայն միշտ չէ, որ դա հաջողվում է: Դա կախված է մի շարք գործոններից.

1.սոցիալական պատվերով պայմանավորված ՝ դասերին ներկայացվող պահանջների գիտակցումից և կատարումից

2.ուսումնական գործընթացի օրինաչափությունից

3.դեպի ազգային արժեքներ ուսուցման կողնորոշումից

4.նպատակներից, ինչպես նաև ուսումնադաստիարակչական և զարգացնող խնդիրների լուծումից:

Դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի բնորոշ հատկանիշ է ուսումնական նպատակ հատակությունը, դաստիարակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հստակ և հետևողական իրագործումը: Հասկացությունների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:

Աշխարհագրության ուսուցման գործընթացում, ընդհանրապես դպրոցական պրակտիկայում, հանդիպում ենք տարբեր տիպի դասերի, որոնք ունեն իրենց ուսումնադաստիարակչական նպատակը: Դասերի տիպերի դասակարգման շատ

տարբերակներ ունեն ընդհանուր բնույթ: Դրանց հիմքում ընկած են հիմնական նպատակները՝ պատրաստի գիտելիքների յուրացումը, կրկնության միջոցով դրանց ամրապնդումը ,գիտելիքների կիրառումը պրակտիկայում, սովորողների ձեռք բերած գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ստուգումը, կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակով կատարվող վարժությունները: Այդ տիպի դասերից են ներածական դասը, խառը կամ համակցված դասը, նոր գիտելիքների ուսումնասիրման դասը, զրույց դասը, գիտելիքների ստուգման և գնահատման դասը, էքրսկուրսիոն դասերը, սեմինարների դասը և այլն: Թվարվածներից առավել գործնականը և արդյունավետը, իմ համոզմամբ, համակցված դասն է, որն ընդգրկում է ուսուցման գործընթացի շատ կողմեր՝ նոր գիտելիքների հաղորդում և յուրացում, ամրապնդում, ընդհանրացում, ստուգում և գնահատում: Դասի այս տիպն ամենատարածվածն է հատկապես ցածր դասարաններում ,որտեղ սովորողների ուշադրությանն անկայուն է ,նրանք չեն կարողանում երկար ժամանակ զբաղվել միևնույն բնույթի աշխատանքով, կարիք են զգում աշխատանքի բովանդակության, ուսուցման ձևերի ու մեթոդների հաճախակի փոփոխման, այլապես կկորցնեն հետաքրքրությունը դասի նկատմամբ: Դասի այդ տիպը կարող ենք կիրառել ոչ մեծ ուսումնական թեմաներն ուսումնասիրելիս:

Աշխարհի 231 պետությունների մեջ մեր փոքրիկ Հայաստանի Հանրապետությունը համայն հայության հայրենիքն է, քանի որ բացի մեր բուն հայրենիքից, ունենք նաև սփյուռք: Այդ է պատճառը, որ հատկապես հայ աշակերտի, հայ մարդու արժեհամակարգը պետք է տարբերվի աշխարհի մյուս ժողովուրդների մտածելակերպից: Այդ պատճառով Հայաստանի աշխարհագրության խորը իմացությունը յուրաքանչյուր հային նույնքան անհրաժեշտ է, որքան մայրենի լեզվի, հայրենի ժողովրդի պատմության և մշակույթի իմացությունը: Եթե ուսուցիչը լավ է սերմանում այդ գիտելիքը, ապա այդ իմացությունը կօգնի յուրաքանչյուր աշակերտի ճիշտ գնահատել նաև մեր հայրենիքի զարգացման հեռանկարները և իրական հնարավորությունները,

ճիշտ կողմնորոշվել համաշխարհային և տարածաշրջանային նշանակության իրադարձություններում, հասկանալ մեզ ներկայացվող մարտահրավերները և պատկերացում ունենալ դրանց դիմակայելու ուղիների մասին: Իսկ դա կարող ենք իրականացնել միայն խորապես ճանաչելով և արժանավույն գնահատելով Հայաստան աշխարհը, սիրելով այն և նվիրվելով նրա հզորացման ու բարգավաճման վեհ նպատակին:

## *3.Սովորողների մոտ արժեհամակարգերի ձևավորումը աշխարհագրության դասին՝ գործնական աշխատանքի կիրառմամբ*

Աշխարհագրության դասերի ժամանակ արժեհամակարգերի ձևավորումը սեր է դեպի հայրենիքը, սեր դեպի բնությունը, սեր դեպի իր ծննդավայրը: Տեսական գիտեիքներ ստանալուց հետո, որոշեցինք գործնականում կիրառել այն և մաքրման ու աղբահանման աշխատանքներ կատարեցինք աշակերտների հետ:

Քանզի ժողովրդական ասացվածքն ասում է. «Ավելի լավ է մեկ անգամ տեղնել, քան հարյուր անգամ լսել»: Մենք գործնականում կիրառեցինք այն ինչը տարիներ շարունակ լսել ենք և մեզ համար դարձրել ենք արժեք:

Ես՝ աշակերտներին բաժանեցի խմբերի և մի մասին հանձնարարեցի աղբից մաքրել և ազատել տարածքը, իսկ մյուս մասին հանձնարարեցի, որպեսզի չորացած ծառերի տեղում տնկեն նորերը: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ աշակերտները սովորում են մեծ ուշադրությամբ ցուցաբերել միմյանց հանդեպ, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ:

Երեխաների կատարված աշխատանքը ստորև՝

Եվ, այսպիսով, երեխաները աշխատանքը գործնականում կատարելուց հետո եկան այն եզրակացության,որ երբեք ու երբեք պետք չէ փչացնել բնությունը, քանզի մեկ վնասված տարրը կարող է դառնալ հազարավոր աղետների պատճառ: Նրանք գիտակցեցին, որ բնությունը անսպառ չէ և պետք է հնարավորինս խնայողաբար օգտագործել:

Երբ կկտրվի վերջին ծառը,երբ կթունավորվի վերջին գետը,երբ կսպանվի վերջին թռչունը,այդ ժամանակ կհասկանանք,որ փողը հնարավոր չէ ուտել:(Է.Հեմինգուեյ)

ՈՒստի պետք է սիրել բնությունը, փայփայել այն և անաղարտ փոխանցել հաջորդ սերունդներին:Եվ ահա սա էլ արժեքակարգի ձևավորման մի ձև է աշակերտների մոտ աշխարհագրության դասի ժամանակ:

# 4.Արժեհամակարգի ձևավորման դասի օրինակ

Սովորողների մոտ սերը դեպի հայրենի բնության հանդեպ ձևավորմանը նպաստում է հատկապես Հայաստանի աշխարհագրություն առարկան, երբ ուսումնասիրում ենք մարզերը: Նրանք գաղափար են ունենում իրենց շրջապատի բնառերսուրսային ներուժի ռացիոնալ օգտագործման, պահպանման ու դրանց հիման վրա արդիական տնտեսության զարգացման մասին ,որը կկառուցի ժամանակակից աշխարհի պահանջների հիման վրա: Նրանք ծանոթանում են իրենց մարզի (900_4090մ) կլիմային, հողաբուսական ծածկին, մարդածին լանդշաֆտներին, պատմամշակութային կոթողներին, ոռոգովի հողերին և, ինչու չէ, այն հիմնախնդիրներին, որոնք առաջացնում և հետագայում էլ կառաջացնեն մեծ չլուծվող խնդիրներ: Ուստի ճանաչելով և խորապես ուսումնասիրելով իրենց տարածաշրջանի արժեհամակարգը՝ կկարողանան հետագայում չկանգնել այնպիսի խնդիրների առջև, ինչպիսիք են՝ սելավների, քաղցրահամ ջրի սպառման, մթնոլորտի աղտոտման, հողերի դեգրեդացիայի, գերարածեցման հիմնախնդիրներին: Սակավ բնական հողային ռերսուրսների պայմաններում կկարողանան գյուղատնտեսության ինտենսիվ ուղղությամբ ստեղծել ջերմոցային

տնտեսությունները, օգտագործել կաթիլային ոռոգման  եղանակը քաղցրահամ ջրի հիմնախնդիրից խուսափելու համար: Կկարողանան ամբարել մթնոլորտային տեղումները, այսինքն՝ դաստիարակել այնպիսի ապագա  քաղաքացի, որ ծանոթ լինելով մարզի խնդիրների՝ կարողանա դիմակայել, ճիշտ կազմակերպել իր տնտեսությունը՝ ամուր կանգնելով իր հայրենի հողի վրա,որը կնպաստի բնակչության՝Հայաստանի գյուղական բնակավայրերից դեպի քաղաքներ տեղաշարժի, ինչպես նաև արտագաղթի կանխմանը:

Դպրոցում դասավանդվող «Աշխարհագրություն» դասընթացի առջև դրված են բարդ ու բազմազան ուսումնադաստիարակչական խնդիրներ, որոնք պետք է ապահովեն սովորողների

1.Աշխարհագրական մտածողությունը

2.Կրթաճանաչողական ունակությունների զարգացումը

3.Ստացած գիտելիքների գործնական կիրառումը

4.Հայրենասիրության դաստիարակությունը, ազգային մտածողությունը
5.Բնօգտագործման և բնապահպանության ճիշտ մտածողության ձևերը

Եվ այս հիմնախնդիրներից ելնելով՝ սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորումը դպրոցում կարևորագույն խնդիր է: Սովորողների աշխարհագրական մտածողության և գիտական աշխարհայացքի ձևավորման հիմքեր դնելը, սովորողների աշխարհագրական գիտելիքների հաստատման նպատակով դպրոցում կարևորվում է աշխարհագրության՝ ամբողջական, կառուցողական գիտություն լինելն ու նրա զարգացման արդի միտումները ներկայացնելը, ինչպես նաև,  գիտական հետազոտության ամենահատկանշական մեթոդներին, աշխարհագրության յուրահատուկ գիտական լեզվին՝ քարտեզին առավել խորությամբ ծանոթացնելը: Աշխարհագրական գիտելիքների շնորհիվ պետք է ձևավորվի այնպիսի արժեքային համակարգ, որ սովորողի համար աշխարհը ճանաչելի դառնա և միասնական, ամբողջական, բնության ու

հասարակական կյանքի բաղադրիչները գտնվեն սերտ կապի մեջ և փոփոխվեն ժամանակի և տարածության մեջ:

Այսպիսով, ամփոփելով իմ հետազոտական աշխատանքը՝ եկա այն եզրակացության, որ պետք է դաստիարակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում: Ներարկել այն գաղափարը, որ հայրենիքն ու հայոց բանակին ծառայելը պատվի գործ է:

●Աշակերտը ստացած աշխարհագրական գիտելիքների շնորհիվ պետք է սիրի բնությունը, գնահատի բնության գեղեցկությունը, հոգատար վերաբերմունք ունենա կենդանական և բուսական աշխարհի նկատմամբ:

●Դպրոց ավարտող սովորողը, որպես արժեքային համակարգի տարրեր պետք է պարտավորվածություն կրի բնության, հասարակության, սեփական անձի հանդեպ, հասկանա, որ պետք է բնության հետ ապրել ներդաշնակ:

●Դպրոցների երևակայության զարգացման կարևորագույն միջոցներն են համարվում ուսուցչի պատկերավոր խոսքը, երևակայական ճանապարհորդությունները քարտեզով, առանձին տարածքների աշխարհագրական բնութագրերի կազմումը համապատաս- խան քարտեզներով և նկարներով:

Առաջարկում եմ հասնել այն բանին, որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդրի լուծման գործին, որպեսզի կարողանանք հպարտությամբ ծառայել նրա բարօրությանը: Քանզի ինչպես ասել է մեծն Ռաֆֆին.«Ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարտապես սիրել այն»:

## *Գրականության ցանկ*

1.Սուխոմլինսկի Վ.Ա Սիրտս նվիրում եմ երեխաներին,Երևան 1977

2.Բաբանսկի Յու.,Կ.Պոբեդանոսցև Գ.Ա. «Աշակերտների դաստեարակությանը կոմպլեքսային մոտեցում», Երևան 1987թ

3.Հանրակրդական դպրոցի «Աշխարհագրություն» և«Հայաստանի աշխարհագրություն»առարկայի չափորոշիչներ և ծրագրեր

4. Վիկիպեդիա ազատ հանրագիտարան- https://hy.wiktionary.org/wiki/%D5%A1%D6%80%D5%AA%D5%A5%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3

5. Առարկայական չափորոշիչ- https://lib.armedu.am/category/59

6. Հանրակրթական պետական չափորոշիչ- https://lib.armedu.am/category/59?f=&sb=122

7. Արժեքները միջմշակութային համատեքստում-https://noravan.schoolsite.am/